ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

7 հունիսի 2016 թվականի **թիվ 68** քաղ. Մոսկվա

Որպես չափումների հղումային մեթոդիկա (մեթոդ) կիրառվող՝ չափումների մեթոդիկայի (մեթոդի) վկայագրման կարգը հաստատելու մասին

«Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) 9-րդ կետի 3-րդ ենթակետի իրականացման նպատակներով եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի թիվ 2 հավելվածի 15-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց.**

1. Հաստատել որպես չափումների հղումային մեթոդիկա (մեթոդ) կիրառվող՝ չափումների մեթոդիկայի (մեթոդի) վկայագրման կից ներկայացվող կարգը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններն ուժի մեջ մտնելու օրվանից, սակայն սույն Որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց ոչ շուտ:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
կոլեգիայի նախագահ՝ Տ. Սարգսյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի
2016 թվականի հունիսի 7-ի
թիվ 68 որոշմամբ

ԿԱՐԳ

որպես չափումների հղումային մեթոդիկա (մեթոդ) կիրառվող՝ չափումների մեթոդիկայի (մեթոդի) վկայագրման

1. Սույն կարգը մշակվել է «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) 9-րդ կետի 3-րդ ենթակետին համապատասխան եւ սահմանում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում որպես չափումների հղումային մեթոդիկա (մեթոդ) կիրառվող՝ չափումների մեթոդիկայի (մեթոդի) վկայագրման կանոնները (այսուհետ համապատասխանաբար՝ հղումային մեթոդիկայի վկայագրում, հղումային մեթոդիկա, անդամ պետություններ, Միություն)։

2. Սույն կարգի նպատակներով չափումների առաջնային հղումային մեթոդիկա (մեթոդ) ասելով՝ հասկացվում է չափումների այնպիսի մեթոդիկա (մեթոդ), որն անդամ պետությունում ամենաբարձր ճշգրտությամբ իրականացվում է 1 լրակազմով սարքավորմամբ միակ իրավաբանական անձի կողմից, կիրառվում է միեւնույն, այդ թվում՝ հղումային մեծությունների չափումների այլ մեթոդիկաների (մեթոդների) օգտագործմամբ ստացված չափումների արդյունքների ճշտությունը գնահատելու համար, թույլ է տալիս չափումների արդյունքներն ստանալ՝ առանց միեւնույն տեսակի մեծությունների միավորների նկատմամբ չափագիտական

հետեւելիության, եւ հաստատված է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ որպես անդամ պետությունում կիրառվող առաջնային հղումային մեթոդիկա (մեթոդ):

Սույն կարգում օգտագործվող այլ հասկացություններ կիրառվում են «Չափումների միասնականության ապահովման ոլորտում համաձայնեցված քաղաքականություն անցկացնելու մասին» արձանագրությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 10 հավելված) սահմանված իմաստներով:

3. Հղումային մեթոդիկայի վկայագրումն անցկացվում է չափումների վերամշակված մեթոդիկայի (մեթոդի) կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման կարգին համապատասխան վկայագրված չափումների մեթոդիկայի (մեթոդի) մասով (այսուհետ համապատասխանաբար՝ չափագիտական վկայագրում, Հանձնաժողով):

4. Հղումային մեթոդիկայի վկայագրումն անցկացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան անդամ պետությունում համապատասխան տեսակի չափումների մասով բարձրագույն ճշգրտությամբ մեծությունների միավորների եւ մեծությունների սանդղակների (չափումների սանդղակների) վերարտադրում, պահպանում եւ փոխանցում իրականացնող կազմակերպության կողմից (այսուհետ՝ լիազորված կազմակերպություն):

Վկայագրված հղումային մեթոդիկան հաստատվում է անդամ պետության չափումների միասնականության ապահովման մասով լիազորված մարմնի կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին):

Հղումային մեթոդիկայի վկայագրումն անցկացվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան այդ անդամ պետության տարածքում գրանցված՝ հղումային մեթոդիկայի մշակող հանդիսացող ցանկացած իրավաբանական անձի կամ որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձի կամ այն անձի հայտի համաձայն, որի պատվերով մշակվել է հղումային մեթոդիկան (այսուհետ՝ հայտատուներ):

5. Հղումային մեթոդիկայի վկայագրման ընթացքում անցկացվում են տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրություններ, եւ իրականացվում են չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին հղումային մեթոդիկայի համապատասխանության հաստատում եւ միեւնույն տեսակի մեծության չափումների այլ մեթոդիկաների (մեթոդների) օգնությամբ ստացված մեծության չափված արժեքների ճշտությունը գնահատելու համար, ինչպես նաեւ չափումների միջոցների տրամաչափարկման կամ ստանդարտ նմուշների բնութագրերը սահմանելու համար դրա օգտագործման հնարավորության հաստատում:

Լիազորված կազմակերպությունը փորձարարական հետազոտությունների շրջանակներում միջլաբորատոր բաղդատումներ անցկացնելու համար կարող է ներգրավել հայտատուին եւ (կամ) անդամ պետությունների այլ կազմակերպություններ:

6. Հղումային մեթոդիկայի տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրություններ անցկացնելիս իրականացվում են՝

ա) չափումների ստացվող արդյունքների ճշգրտության ցուցանիշների սահմանում՝ հետեւյալի համապատասխանությունը հաստատելու նպատակներով՝

հղումային մեթոդիկայի՝ իր նպատակային նշանակությանը (համապատասխանությունը չափումների օբյեկտի հատկություններին եւ չափվող մեծությունների բնույթին),

չափումների կատարման պայմանների՝ հղումային մեթոդիկայի կիրառման պահանջներին,

չափումների արդյունքների ճշգրտության ցուցանիշների՝ հղումային մեթոդիկայի մշակման տեխնիկական առաջադրանքում կամ հղումային մեթոդիկայի մշակման ելակետային պահանջներ պարունակող այլ փաստաթղթում սահմանված՝ չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին (այսուհետ՝ տեխնիկական առաջադրանք),

հղումային մեթոդիկայի իրականացման համար օգտագործվող՝ հաստատված տեսակի մեծությունների միավորների չափանմուշների, ստանդարտ նմուշների եւ չափումների միջոցների՝ չափումների ստացվող արդյունքների՝ մեծությունների միավորների պետական առաջնային չափանմուշների կամ առաջնային հղումային մեթոդիկաների (մեթոդների), իսկ դրանց բացակայության դեպքում՝ այլ պետությունների չափումների մեծությունների միավորների ազգային չափանմուշների կամ առաջնային հղումային մեթոդիկաների (մեթոդների) նկատմամբ հետեւելիության ապահովման պայմաններին,

չափումների արդյունքների գրառումների՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) մեծությունների միավորների անվանումներին եւ (կամ) պայմանանշաններին եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 21-ի թիվ 34 որոշմամբ հաստատված՝ Միության տեխնիկական կանոնակարգերի մշակման ժամանակ կիրառվող մեծությունների արտահամակարգային միավորների, այդ թվում՝ Միավորների միջազգային համակարգի (ՄՀ) հետ դրանց հարաբերակցության ցանկին,

չափումների ստացված արդյունքների ներկայացման ձեւի՝ չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին,

բ) հղումային մեթոդիկայի ճշգրտության ցուցանիշների՝ դրա կիրառման նպատակներին համապատասխանության գնահատում՝ միեւնույն տեսակի մեծությունների չափումների այլ մեթոդիկաների (մեթոդների) կիրառմամբ ստացված չափումների արդյունքների ճշտությունը գնահատելու, չափումների միջոցների տրամաչափարկման կամ ստանդարտ նմուշների բնութագրերը սահմանելու համար,

գ) հղումային մեթոդիկայի կիրառման ընթացակարգի փորձարարական փորձարկում՝ միեւնույն տեսակի մեծությունների չափումների այլ մեթոդիկաների (մեթոդների) կիրառմամբ ստացված չափումների արդյունքների ճշտությունը գնահատելու համար,

դ) չափումների ստացված արդյունքների չափագիտական հետեւելիության փաստաթղթային հաստատում, այդ թվում՝ միեւնույն տեսակի մեծությունների չափումների առաջնային հղումային մեթոդիկայի (մեթոդի) (դրա առկայության դեպքում) կիրառմամբ ստացված չափումների արդյունքների ճշտության գնահատման օգտագործմամբ,

ե) միջլաբորատոր բաղդատումների կամ միեւնույն տեսակի մեծության չափումների այլ հղումային մեթոդիկայի (մեթոդի) հետ բաղդատման անցկացում,

զ) անորոշության բյուջեի կամ չափումների ստացված արդյունքի սխալանքի կառուցվածքի ներկայացում,

է) չափումների ստացված արդյունքների ճշգրտության ցուցանիշների հսկողության փաստաթղթավորված ընթացակարգի փորձարարական փորձարկում:

7. Հղումային մեթոդիկայի՝ չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին համապատասխանությունը հաստատելիս լիազորված կազմակերպության կողմից անցկացվում է հետեւյալի ճշտության (հիմնավորվածության) գնահատում՝

ա) հետեւյալի ընտրության՝

մեթոդի,

չափումների միջոցների,

ստանդարտ նմուշների,

օժանդակ եւ այլ տեխնիկական միջոցների,

բ) փորձանմուշներ վերցնելիս ու պատրաստելիս, չափումներին նախապատրաստվելիս եւ այդ չափումները կատարելիս գործառնությունների հերթականության եւ բովանդակության սահմանման,

գ) չափումների միջանկյալ արդյունքների մշակման եւ չափումների վերջնական արդյունքների հաշվարկների,

դ) չափումների մոդելի,

ե) փորձարարական ուսումնասիրությունների ծրագրի եւ ծավալի, ներառյալ՝ փորձանմուշներ վերցնելու եւ պատրաստելու փուլերը (մեթոդները),

զ) կատարված տեսական ուսումնասիրությունների,

է) չափումներ անցկացնելու պայմանների ընտրության եւ գնահատման,

ը) չափումների արդյունքների մշակման եղանակների եւ միջոցների, ներառյալ՝ ծրագրային ապահովման ընտրության,

թ) չափումների ճշգրտության ցուցանիշների ընտրության եւ դրանց նշանակությունների սահմանման,

ժ) վկայագրման արդյունքում սահմանված՝ չափումների ճշգրտության ցուցանիշների ապահովման ընթացակարգերի (այդ թվում՝ չափումների արդյունքի՝ մեծությունների միավորների պետական առաջնային չափանմուշների նկատմամբ հետեւելիության ապահովման մեթոդների, ինչպես նաեւ ճշգրտության ցուցանիշների հսկողության միջոցների) ընտրության եւ (անհրաժեշտության դեպքում) ընդունվող որոշումների արժանահավատության:

8. Միեւնույն տեսակի մեծությունների չափումների այլ մեթոդիկաների (մեթոդների) օգնությամբ ստացված մեծության չափված արժեքների ճշտությունը գնահատելու համար, չափումների միջոցների տրամաչափարկման կամ ստանդարտ նմուշների բնութագրերը սահմանելու համար հղումային մեթոդիկայի օգտագործման հնարավորությունը հաստատելիս լիազորված կազմակերպության կողմից անցկացվում է տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրությունների նյութերի առկայության ստուգում՝ սույն կարգի 6-րդ կետի «բ» - «է» ենթակետերին համապատասխան:

9. Հղումային մեթոդիկայի վկայագրում անցկացնելու համար հայտատուի կողմից լիազորված կազմակերպություն են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը՝

ա) հայտը (նշելով հղումային մեթոդիկայի անվանումը, հայտատուի մասին տեղեկությունները, ինչպես նաեւ նշելով վկայագրման աշխատանքները ճանաչելու անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան),

բ) տեխնիկական առաջադրանքը,

գ) տեխնիկական առաջադրանքով նախատեսված ծավալով փաստաթղթերը,

դ) փաստաթղթի նախագիծը (փաստաթուղթը)՝ հղումային մեթոդիկայի շարադրմամբ,

ե) հղումային մեթոդիկայի՝ սույն կարգի 6-րդ կետի «ա» ենթակետին համապատասխան անցկացվող տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրությունների ծրագիրը եւ արդյունքները (փորձարարական ուսումնասիրությունների արձանագրությունները, սխալանքների կամ անորոշությունների փորձարարական կամ հաշվարկային գնահատման արդյունքները, ինչպես նաեւ ճշգրտության ցուցանիշների գնահատմանն ուղղված միջլաբորատոր եւ (կամ) ներլաբորատոր փորձարկումների ծրագիրը եւ արդյունքները (եթե այդպիսի փորձարկումներ նախատեսված են տեխնիկական առաջադրանքով)), որոնք հաստատում են սույն կարգի 6-րդ կետի «բ» - «է» ենթակետերի պահանջների կատարումը:

10. Լիազորված կազմակերպության կողմից աշխատանքներն իրականացվում են սույն կարգի 7-րդ եւ 8-րդ կետերի համաձայն՝ վերամշակված հղումային մեթոդիկայի համար, կամ վերջինիս որոշմամբ՝ սույն կարգի 8-րդ կետի համաձայն՝ չափագիտական վկայագրում անցած մեթոդիկայի համար:

11. Այն դեպքում, երբ հղումային մեթոդիկայի վկայագրումն անցկացվում է չափումների վերամշակված մեթոդիկայի (մեթոդի) մասով, սույն կարգի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված աշխատանքների կատարման դրական արդյունքների

դեպքում լիազորված կազմակերպության կողմից ձեւակերպվում է չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման մասին վկայական՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման կարգի հավելվածով նախատեսված ձեւի համաձայն, որը տրվում է հայտատուին լիազոր մարմնի կողմից մեթոդիկայի հաստատվելուց հետո:

12. Հղումային մեթոդիկայի վկայագրում անցկացնելու ավարտին լիազորված կազմակերպության կողմից լիազոր մարմին են ներկայացվում հետեւյալ փաստաթղթերը՝

ա) փաստաթուղթ՝ հղումային մեթոդիկայի շարադրմամբ,

բ) հղումային մեթոդիկայի՝ չափումներին ներկայացվող չափագիտական պահանջներին համապատասխանության մասին եզրակացությունը,

գ) լիազորված կազմակերպության ղեկավարի կողմից հաստատված եւ տեսական եւ (կամ) փորձարարական ուսումնասիրությունների արդյունքները պարունակող հաշվետվությունը (կից ներկայացնելով փաստաթղթեր, որոնք հաստատում են հղումային մեթոդիկայի համապատասխանությունը սույն կարգի 7-րդ եւ 8-րդ կետերի դրույթներին),

դ) չափումների մեթոդիկայի (մեթոդի) չափագիտական վկայագրման մասին վկայականի պատճենը (հղումային մեթոդիկայի համար, որի մասով նախկինում անցկացվել է չափագիտական վկայագրում):

13. Լիազոր մարմնի կողմից անցկացվում է ներկայացված փաստաթղթերի ամբողջականության եւ արժանահավատության ստուգում, որոշում է ընդունվում հղումային մեթոդիկան հաստատելու կամ դրա հաստատումը մերժելու մասին, կատարվում են աշխատանքներ՝ Հանձնաժողովի կողմից հաստատվող՝ չափումների միասնականության ապահովման աշխատանքների արդյունքների փոխադարձ ճանաչման կանոններին համապատասխան, եւ այդ մասին գրավոր տեղեկացվում են լիազորված կազմակերպությունը եւ հայտատուն:

14. Հաստատված հղումային մեթոդիկայի մասին տեղեկությունները լիազոր մարմնի կողմից փոխանցվում են անդամ պետության՝ չափումների միասնականության ապահովման տեղեկատվական ֆոնդ՝ այդ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

15. Հղումային մեթոդիկայում փոփոխությունների կատարումն իրականացվում է մշակողի կողմից։ Այդ դեպքում անցկացվում են հղումային մեթոդիկայի վկայագրում ու հաստատում (կատարված փոփոխություններով)՝ սույն կարգին համապատասխան։